

ԿԱՐԳ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՌԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ**

1. Սույն կարգը մշակվել է «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Ասոցիացիա) կանոնադրության 7.7 կետի պահանջների հիման վրա և սահմանում է Ասոցիացիայի անդամի և անդամության թեկնածուի ընդունելության չափանիշները և ընթացակարգը:
2. Ասոցիացիայի անդամի և անդամության թեկնածուի ընդունելությունը կատարվում է դիմորդի գրավոր դիմումի համաձայն (Հավելված 1):
3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված դիմումի հետ մեկտեղ դիմորդները անդամագրվելու համար կից ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.
 - ա) Անձնագրի պատճենը;
 - բ) Կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը (պատճենները);
 - գ) Հաշվետարի կամ հաշվապահի կամ աուդիտորի որակավորման վկայականի պատճենը (պատճենները);
 - դ) Աշխատանքային գրքույկի պատճենը (պատճենները);
 - ե) Մուտքի վճարը հաստատող փաստաթղթի պատճենը;
 - զ) 3X4 չափի երկու լուսանկար;
 - է) Անձնական տվյալների վերաբերյալ տեղեկանքը՝ սույն Կարգի Հավելված 2-ում սահմանված ձևով;
 - ը) Հայտարարություն (Հավելված 3), որտեղ դիմորդը, մասնավորապես, նշում է.
 - դատարանի վճռով ճանաչվել է արդյոք անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
 - դատապարտվել է արդյոք դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,
 - նախկինում հանդիսացել է արդյոք Ասոցիացիայի անդամ կամ անդամության թեկնածու և եթե այո՝, ապա ինչ պատճառով է դադարեցվել անդամությունը/անդամության թեկնածությունը:
4. Անդամակցությունը հաստատվում է Անդամակցության և մասնագիտական էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ, եթե դիմորդը ներկայացրել է սույն կարգի 3-րդ կետով սահմանված բոլոր փաստաթղթերը, բավարարում է ՀՀԱԱ կանոնադրության 7.3 և 7.4 կետերի պահանջներին, և եթե առկա չեն սույն Կարգի 12-րդ կետում նշված՝ դիմումի մերժման հիմքերը:
5. Դիմումները գրանցվում են թելակարված, կնքված և ՀՀԱԱ նախագահի կողմից ստորագրված գրանցամատյանում (Հավելված 4):

6. Գիմում ստանալուց առավելագույնը 10-օրյա ժամկետում ՀՀԱԱ տնօրինությունը էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Հանձնաժողովին դիմում ստանալու փաստի վերաբերյալ՝ կցելով դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:
7. Այն դեպքում, երբ ՀՀԱԱ անդամության համար դիմելու հիմք է հանդիսանում ՀՀԱԱ Կանոնադրության 7.3 կետի I ենթակետի վերջին պարբերության մեջ հիշատակված այլ մասնագիտացված կառույցի կողմից տրված ատղիտորի կամ հաշվապահի որակավորումը, ՀՀԱԱ տնօրինությունը, սույն Կարգի 6-րդ կետում նշված ժամկետում, Հանձնաժողովին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն դիմորդի որակավորումը շնորհող մասնագիտական մարմնի՝ Հաշվապահների միջազգային դաշնությանը (ՀՄԴ) անդամակցության վերաբերյալ: Եթե այդ կառույցը ՀՄԴ անդամ չի հանդիսանում, ապա ՀՀԱԱ տնօրինությունը տրամադրում է տեղեկատվություն այդ կառույցի որակավորման ծրագրի վերաբերյալ:
8. Գիմումները քննարկվում են Հանձնաժողովի կողմից դիմումը ներկայացնելու օրվանից ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում:
9. Գիմորդի մասնակցությունը Հանձնաժողովի նիստին պարտադիր չէ, սակայն Հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը կարող է միջնորդել, որպեսզի դիմումը քննարկվի դիմորդի ներկայությամբ: Այդ դեպքում դիմորդը հրավիրվում է Հանձնաժողովի նիստին, և նրա դիմումը քննարկվում է բացառապես դիմորդի ներկայությամբ:
10. Հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում դիմորդից կարող է պահանջել լրացուցիչ հիմնավոր փաստաթղթեր: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կողմից պահանջված լրացուցիչ փաստաթուղթը/փաստաթղթերը էական են անդամության/անդամության թեկնածության մասին որոշում կայացնելու համար, դիմորդի դիմումը կրկին քննարկվում է այդ փաստաթուղթը/փաստաթղթերը ՀՀԱԱ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: Այս դեպքում ՀՀԱԱ տնօրինությունը 10-օրյա ժամկետում Հանձնաժողովին էլեկտրոնային նամակով տեղեկացնում է պահանջված փաստաթղթի/փաստաթղթերի ստացման մասին: Եթե Հանձնաժողովի կողմից պահանջված լրացուցիչ փաստաթուղթը/փաստաթղթերը էական չեն անդամության/անդամության թեկնածության մասին որոշում կայացնելու համար, սակայն անհրաժեշտ են դիմումի ամբողջականության համար, ապա դիմորդի անդամության/անդամության թեկնածության որոշումը կայացվում է Հանձնաժողովի կողմից պահանջված փաստաթուղթը/փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում՝ Հանձնաժողովի նախագահի կողմից:
11. Հանձնաժողովի կողմից անդամակցության/անդամության թեկնածության մասին դիմումը կարող է մերժվել հետևյալ դեպքերում.
 - սույն Կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերից մեկը կամ մի քանիսը ներկայացված չլինելու դեպքում;
 - սույն Կարգի 3-րդ կետում նշված ոչ իրական/կեղծ փաստաթղթեր ներկայացված լինելու դեպքում;
 - սույն Կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերում ոչ արժանահավատ տեղեկատվություն ներկայացրած լինելու դեպքում;
 - Հանձնաժողովի հիմնավոր կարծիքով դիմորդի կողմից ՀՀԱԱ պրոֆեսիոնալ հաշվապահի Վարքագրքի կանոնները խախտած լինելու դեպքում:

12. Դիմումների մերժումները Հանձնաժողովի կողմից ներկայացվում են ՀՀԱԱ Խորհրդին՝ մերժմանը հաջորդող ՀՀԱԱ Խորհրդի նիստին:
13. Հանձնաժողովի որոշման մասին դիմորդներին պատշաճ ձևով (էլ. փոստ, ֆաքս, պատվիրված նամակ) տեղեկացվում է որոշումն ընդունելուց հետո 15 օրվա ընթացքում:
14. Սույն կարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների
ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը
անդամագրվելու կարգի

դիմումի ձև

«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների
ասոցիացիա» հասարակական կազմակերպության
նախագահ՝
պարոն (անուն ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ անդամագրել «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների
ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ որպես անդամ/անդամության
թեկնածու (ընդգծել):

Դիմող՝ __ (ստորագրություն, անուն, ազգանուն,)

« ____ » _____ 201 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

1. Անունն ամբողջությամբ

_____ (ազգանուն, անուն, հայրանուն)

2. Ծննդյան թիվը _____
(օր, ամիս, տարի)

2. ՀՀ անձնագրի համարը _____
(սերիա, համար, տրման ամսաթիվ, ում կողմից)

3. Բնակության հասցե

Երկիր _____ Փոստային ինդեքս _____

Մարզ _____ Զաղաք _____

Փողոց _____ Շենք _____

Բնակ. _____

Հեռախոս
(տուն) _____ (աշխ.) _____ (բջջ.) _____
(կող, համար) (կող, համար) (կող, համար)

Էլեկտրոնային փոստ _____ @ _____

5. Ծննդավայր _____
(երկիր, քաղաք, գյուղ)

6. Սեռ արական իգական

7. Քաղաքացիություն _____

8. Տեղեկություն կրթության մասին (նշել ուսումնական հաստատությունը, ստացած մասնագիտությունը, ընդունվելու և ավարտելու տարեթիվը)

9. Տեղեկություն աշխատանքի մասին (նշել ներկա և վերջին երկու աշխատավայրերը)

Ա. Կազմակերպության անվանունը (առանց հապավումների)

Կազմակերպության հասցեն.

Մարզ _____ Փոստային ինդեքս _____

Քաղաք _____ Փողոց _____ Շենք _____

Գործունեության ոլորտը _____

Հեռախոս _____ Ֆաքս _____
(կող, համար) (կող, համար)

Զբաղեցրած պաշտոնը _____

Նշված կազմակերպությունում աշխատելու ժամանակաշրջանը.

_____ (ընդունվելու օր, ամիս, տարի - ազատվելու օր, ամիս, տարի)

Բ. Կազմակերպության անվանունը (առանց հապավումների)

Կազմակերպության հասցեն.

Մարզ _____ Փոստային ինդեքս _____

Քաղաք _____ Փողոց _____ Շենք _____

Գործունեության ոլորտը _____

Հեռախոս _____ Ֆաքս _____
(կող, համար) (կող, համար)

Զբաղեցրած պաշտոնը _____

Նշված կազմակերպությունում աշխատելու ժամանակաշրջանը.

_____ (ընդունվելու օր, ամիս, տարի - ազատվելու օր, ամիս, տարի)

Գ. Կազմակերպության անվանունը (առանց հապավումների)

Կազմակերպության հասցեն.

Մարզ _____ Փոստային ինդեքս _____

Քաղաք _____ Փողոց _____ Շենք _____

Գործունեության ոլորտը _____

Հեռախոս _____
(կող, համար)

Ֆաքս _____
(կող, համար)

Զբաղեցրած պաշտոնը _____

Նշված կազմակերպությունում աշխատելու ժամանակաշրջանը.

(ընդունվելու օր, ամիս, տարի - ազատվելու օր, ամիս, տարի)

10. Ստացել եմ հաշվետարի, հաշվապահի, աուդիտորի որակավորում (ընդգծել)`

Ում կողմից է տրվել _____

Վկայականի համարը _____

Տրման ամսաթիվը _____

11. Տիրապետում եմ հետևյալ լեզուներին

(նշել լեզուները)

12. Անդամակցությունը այլ ՀԿ-ներին

Կազմակերպության անվանումը _____

Անդամակցության տեսակը _____

Անդամակցելու ամսաթիվը _____

Վկայականի համարը _____

13. Իմ մասին լրացուցիչ հայտնում եմ`

Ես _____ ս վերոնշյալ տեղեկատվության արժանահավատությունը հավաստում եմ, որի համար ստորագրում եմ: Վերոնշյալ տեղեկատվության փոփոխության դեպքում պարտավորվում եմ ողջամիտ ժամկետում փոփոխության մասին գրավոր տեղեկացնել ՀՀԱԱ տնօրինությանը:

(ստորագրություն, անուն, ազգանուն,)

« _____ » _____ 200 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3
«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների
ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը
անդամագրվելու կարգի
Հայտարարության ձև

Ես -----ս հայտարարում եմ, որ.

1. Ծանոթացել եմ ՀՀԱԱ կանոնադրությանը և ընդունում եմ այն ամբողջությամբ:
2. Ծանոթացել եմ ՀՀԱԱ պրոֆեսիոնալ հաշվապահի Վարքագրքին և ընդունում եմ այն ամբողջությամբ:
3. Դատարանի վճռով չեմ ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
4. Չեմ դատապարտվել դիտավորությամբ կատարված հանցագործության համար,
5. Նախկինում չեմ հանդիսացել Ասոցիացիայի անդամ կամ անդամության թեկնածու/հանդիսացել եմ Ասոցիացիայի անդամ կամ անդամության թեկնածու, և անդամությունս կամ անդամության թեկնածությունս դադարեցվել է _____

_____ պատճառով¹:

Դիմող՝ __ (ստորագրություն, անուն, ազգանուն,)

« ____ » _____ 201 թ.

¹ Խնդրում ենք գիծ քաշել սխալ տարբերակի վրա:

